ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2020թ. հունվարի 08-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ՄԱԱՊՁԲ-20/8-Պ պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

Ք. Երևան 18 փետրվարի 2021թ.

«Մամուլի տարածման գործակալություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա. Մխիթարյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա մի կողմից, և

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

(յուրաքանչյուրը առանձին՝ Կողմ, միասին՝ Կողմեր)

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի, 441-րդ հոդվածի 2-րդ մասի և 466-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչպես նաև Կողմերի միջև 2020թ. հունվարի 08-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ՄԱԱՊՁԲ-20/8-Պ ստորագրված պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.9 կետի պահանջները, ստորագրեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերը համաձայնեցին.

1. Պայմանագիր 1.3-րդ կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1.1 «1.3 Սույն Պայմանագրով Ապրանքների մատակարարումը պետք է իրականացվի մինչև 2021թ.-ի հունվարի 31-ը ներառյալ:»:

2. Պայմանագիր 3.1-րդ կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2.1 «3.1 Պայմանագրով մատակարարման ենթակա Ապրանքների ընդհանուր արժեքը կազմում է 447 900 (չորս հարյուր քառասունյոթ հազար ինը հարյուր) ՀՀ դրամ՝ համաձայն սույն Պայմանագրի Հավելված 1-ով սահմանված նախահաշվի: Սույն Պայմանագրի ընդհանուր արժեքը ներառում է Պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:»:

3. Պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող Հավելված 1-ի «ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԸ ԵՎ ԱՐԺԵՔԸ» անվանումով աղյուսակը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԸ ԵՎ ԱՐԺԵՔԸ*

	Թերթի անվանում	**Բաժանորդագրության տևողություն**	**Տարեկան քանակ /հատ/**	**Օրական քանակ /հատ/**	**Միավորի Արժեք /ՀՀ դրամ/**
1	Հայաստանի Հանրապետություն	13-ամսյա	235	1	100
2	Голос Армении	13-ամսյա	39	1	200
3	Առավոտ	13-ամսյա	482	2	200
4	Ազգ	13-ամսյա	44	1	200
5	Հայկական Ժամանակ	13-ամսյա	462	2	200

6	Իրավունք	13-ամսյա	144	1	100
7	Ժամանակ	13-ամսյա	458	2	200
8	168 ժամ	13-ամսյա	82	2	200
9	Հրապարակ	13-ամսյա	231	1	100
10	Ժողովուրդ	13-ամսյա	456	2	100
11	Փաստ	13-ամսյա	186	1	150

»:

4. Սույն Համաձայնագրով սահմանված պայմանները կիրառելի են Կողմերի միջև մինչև 2021 թվականի հունվարի 31-ը առաջացած հարաբերությունների նկատմամբ:
5. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
6. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:
7. Սույն Համաձայնագիրը ստորագրված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Մամուլի տարածման գործակալություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Սասունցի Դավթի Հրապարակ 2
ՀՎՀՀ՝ 00401345
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 1510001986720100

Ա. Մխիթարյան
Տնօրեն

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Գ.Հովսեփյան 26

ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն